№ 131 ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 17 **1899** ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 17 № 131

ՔԱՌԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Նինա Յովանեան, Սօֆիա Եագօրեան, Յովհաննէս, Գաբրիէլ Սարգիս, Բարսեղ, Արշակ, Ալէքսանդր, Նատալիա և Սօֆիա Զուրաբեան Միրզոյեանները, Թինանա Աւետիքեան և Յովհաննէս Եագօրեան Պարոփները, Թալիկո Զուրաբեան և Բարսեղ Սողոմոնեան Կորգանովները զաւակներով, յայտնելով իրանց ընտանիքի սիրելի և թանդագին անդամ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԶՈՒՐԱԲԵԱՆ ՄԻՐԶՈՅԵԱՆԻ

մարմինը Աբատումանից Թիֆլիս բերելու մասին, խնդրում են բարեկամներին և ծանօթներին չնորհ բերել հանգուցեալի յուղարկաւորութեանը, շաբաթ օր, յուլիսի 17-ին, առաւօտեան 10 ժամին, Մողնու ս. Գէորգ եկեղեցին և այնտեղից Վերայի հայոց գերեզմանատունը:

2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օժանդակ միջոցներ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Երևանից. Նամակ Ախալքալաքից. Նամակ Օղեայից. Նամակ Տղվիւից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ինչ է առաջադիմութիւնը:

ՕԺԱՆԴԱԿ ՄԻՋՈՑՆԵՐ

—

Գերմանական յայտնի գիւղատնտես պրոֆեսօր Գոլց նորերս հրատարակեց մի բրօշիւր, որի բովանդակութիւնը հետաքրքրութիւն ունի և մեր երկրի համար: Նրա նիւթը վերաբերում է հացի արդիւնաբերութեան խնդրին: Ինչպէս յայտնի է, Գերմանիան ստանում է իր հացի մի մասը արտասահմանից, այն է Ամերիկայից, Ռուսաստանից և ուրիշ երկիրներից: Գերմանական կալուածատէրերի մեծամասնութիւնը և անտեսագէտների մի ամբողջ խումբ այն կարծիքի են, թէ Գերմանիան պէտք է աշխատի ինքը հայթայթել իր սեփական հացը և չը դիմի ուրիշ երկիրներին: Այդ նպատակով նրանք առաջարկում են ամեն տեսակ դժուարութիւններ դնել ներմուծվող հացի վրա, բարձրացնելով եղած մաքսերը և նպաստելով երկրի գիւղատնտեսներին զանազան դիւրութիւններով: Այդ մտքի պաշտպաններից է կազմված ազգար կոչված կուսակցութիւնը: Պրոֆեսօր Գոլց, որի մասին մենք յիշեցինք, նոյնպէս այն գաղափարի պաշտպան է, որ Գերմանիան պէտք է ձգտի ինքը իր հացը ապահովելու, բայց ուսումնասիրելով Գերմանիայի ներկայ արդիւնաբերութիւնը, եկել է այն եզրակացութեան, որ շատ ժամանակ պէտք է սպասել, մինչև Գերմանիան կարող լինի՝ թէ նոր հողեր մշակելով և թէ եղած հողի մշակութիւնը բարւոքելով այնքան մեծացնել հացի արդիւնաբերութիւնը, որ նա բաւարարութիւն տայ երկրի բոլոր պահանջներին:

Անդրկովկասի զանազան մասերը, ինչպէս յայտնի է, անկարող են ապահովել իրանց հացի պահանջը, իսկ փոքր ի շատէ ճախորդ տարիները մենք ստիպված ենք լինում հաց բերելու հիւսիսային Կովկասից: Նոյն իսկ սովորական տարիներում փոքր չէ ներմուծվող հացահատիկների և ալիւրի քանակութիւնը, որի պատճառն այն է, որ հիւսիսային Կովկասը աւելի էժան գնով է արդիւնաբերում հաց, քան Անդրկովկասը, ուստի և նա յետ է մղում տեղական հացը:

Մենք անկասկած բոլորովին հեռու ենք այն մտքից, որ պահանջենք մեր երկրից ապահովելու իրան՝ միայն իր սեփական հացի արդիւնաբերութեամբ: Բայց մենք պէտք է լուրջ կերպով զբաղվենք այն հարցով թէ ինչպէս անենք, որ մեր ազգաբնակութիւնը ապահովված լինի հացով թէ բերրի և թէ անբերրի տարիներում: Իսկ այդտեղ ամենամեծ տեղն է բռնում այն հարցը թէ՝ ո՞ր աստիճան մեր ազգաբնակութիւնը առհասարակ հարուստ է և որքան նա օժանդակ միջոցներ ունի հաց ձեռք բերելու այն ժամանակ, երբ նա ինքը չէ արդիւնաբերել: Այդ օժանդակ միջոցներն են անասնապահութեան, բանջարաբուծութեան, այգեգործութեան և զանազան արհեստների զարգացնելը, որոնցից ստացած արդիւնքը կը փոխարինէր հացահատիկին: Այդպիսով մեր ազգաբնակութիւնը ձեռք բերած կը լինէր դնելու ընդունակութիւն, որի բացակայութեան պատճառով մարդիկ սկսում են սով զգալ նոյն իսկ այն ժամանակ, երբ վաճառանոցում հացը էժան է և առատ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Յուլիսի 13-ին

Սպասելով բան չէ լինում. երկինքը քարամուք գործելով ուսումնասիրութեան մէջ, այդ երևոյթները ստիպում են գործածել սուբյեկտիվ մեթոդը և միևնոյն ժամանակ թոյլ են տալիս անել այդ՝ լիովին գիտնականօրէն:

Սուբյեկտիվիզմի պաշտպանութեան զուգընթաց՝ Միխայլովսկի զարգացնում է իր պատմափիլիսոփայական վարդապետութիւնը, որի հաստաձայն մարդկութիւնը անցել է օբյեկտիվ—մարդակերօնական, յետոյ արտակերօնական շրջանները և այժմ մասամբ մտել է սուբյեկտիվ—մարդակերօնական շրջանը: Լուրջ նշանակութիւն չը տալով այդ վատ հիմնված և վերին աստիճանի խառնի խուռն պատճառաբանված վարդապետութեան, մենք աւելորդ ենք համարում ծանօթացնել ընթերցողներին նրա հետ:

Սրկար շեղումներից յետոյ Միխայլովսկի նորից վերադառնում է Սպէնսէրի առաջադիմութեան բանաձևին:

Սպէնսէր, ասում է նա, սահմանելով առաջադիմութիւնը իբրև փոխանցումն միատեսակից զանազանատեսակը, պարզից բարդը, ընդհանուրից մասնաւորը՝ երկար շարք տարբերացումների կամ անդամաւորումների միջոցով, յետոյ հարկաւոր է գտնում որոշ չափով ուղղել և լրացնել այդ սահմանումը:

«Որ կան փոխանցումներ պակաս զանազանատեսակից դէպի աւելի զանազանատեսակը, որոնք զարգացումն համարվել չեն կարող, ասում է Սպէնսէր,—այդ ապացուցանում է տեղական հիւանդութիւնների իւրաքանչիւր դէպքը: Մարմնի այն մասը, որի մէջ առաջ է գալիս այս կամ այն հիւանդոտ խուլը, անկասկած ներկայացնում է մի նոր տարբերացում: Արդեօք աւելի կամ պակաս զանազանատեսակ է լինում այդ խուլը քան այն հիւսուածքները, որոնց մէջ երևան է գալիս նա,—դրանում չէ բանը: Հարցը նրանումն է, թէ արդեօք օրգանիզմի կազմը, ամբողջութեամբ առած, աւելի զանազանատեսակ է դառնում չնորհիւ միացման նրա հետ մի այնպիսի մասի, որ ոչ իր ձևով, ոչ բաղադրութեամբ նման չէ առաջվան մասերից ոչ մէկին: Եւ այդ հարցին կարելի է պատասխանել միայն դրական կերպով»:

Սակայն այդ փոխանցումն միատեսակից դէպի զանազանատեսակը Սպէնսէր անհնար է համարում ընդունել իբրև զարգացումն: Յետոյ նա գտնում է, որ մեռած մարմնի առաջին վայրկեաններն էլ բարդացումն, զանազանատեսակութեան սաստկացումն են ներկայացնում: «Թէև վերջնական հետևանքը աւելի միատեսակութիւն է լինելու, բայց անմիջական հետևանքը դրա հակառակն է: Սակայն այդ անմիջական հետևանքը ամենևին չէ կարող համարվել զարգացումն»: «Բայց բոլոր այդ տեսակ օրինակներից, շարունակում է Սպէնսէր, ամենաանվիճելիները հասարակական խառնակութիւնները և յեղափոխութիւններն են: Եթէ մի որ և է ազգի մէջ ապստամբութիւն է ծագում, որ թողնելով անձեռնմխելի երկրի որոշ շրջաններ, արտայայտվում է մի տեղ գաղտնի ընկերութիւններով, միւս տեղ հրապարակական ցոյցերով, իսկ մի ուրիշ տեղ էլ ընդհարման և արիւնհեղութեան յանգող զինակոչութեամբ,—չէ կարելի չը համաձայնել, որ այդ հասարակութիւնը, ամբողջապէս ի նկատ առնված, աւելի զանազանատեսակ է դարձել: Պարզ է, սակայն, որ այդպիսի փոփոխութիւնները չեն կազմում զարգացման յետագայ աստիճաններ, այլ ընդհակառակ ներկայացնում են քայլեր դէպի քայքայումն»:

Սակայն, ինչու է այդ պարզ, հարցնում է Միխայլովսկի: Կան ի հարկէ տեսակէտներ, որոնցով Սպէնսէրի նկարագրած երևոյթները համարվում են իբրև քայլեր դէպի քայքայումն. կան և տեսակէտներ, որոնցով այդ տեսակ երևոյթները ընդունվում են իբրև քայլեր դէպի զարգացումն կամ դէպի քայքայումն՝ նայելով թէ յանուն ինչի են կատարվում այդ ընդհարումները և արիւնհեղութիւնները. վերջապէս ինչ նպատակ էլ ունենայ ամբողջ շարժումը, արիւնցել է: Զորութեան հետ չարունակվում են չոքերը և տաք քամիները: Շուկայ ցորեն չէ գալիս. եկած ցորենի անչնչան քանակութեան գինը օրից օր բարձրանում է. այսօր, ասում են, խալվարը ծախվեց 37 ռուբլիով:

Դարաչիչագի, Նոր-Բայազէտի և Աբարանի կողմերում այս տարի այնպէս աջող բուսել է ցանքը, որ գիւղացիները հիացած՝ չը գիտէին ինչ կերպ արտայայտել իրանց ուրախութիւնը: Եւ յանկարծ, վերջին ամիսը, երբ ցորենը պիտի հասնէր, սկսում է չորութեան հետ մի այնպիսի շոր, որ կանանչը դեղնում է և գլուխը թեքում դէպի ցած: Գիւղացին իզուր ամեն օր, ամեն բոպէ աչքերը գցած երկնքին անձրևի է սպասում. երբեմն-երբեմն կուտակվում են ամպեր, ընկնում են մի քանի կաթիլներ և ահա բարձրանում է քամին ու փախցնում ամպերը. գիւղացին յուսակտուր երեսը շուռ է տալիս: Եւ այսպէս, շարունակվում են շաբաթներ միմեանց ետևից: Կան տեղեր, որ կը տան, եթէ ոչ լաւ, գոնէ միջակ բերք: Բայց կան և այնպիսի տեղեր, որ եթէ մի երկու օր էլ անձրև չը գայ, ամեն բան վերջացած է: Ամեն կողմից էլ նոյն տեղեկութիւնն է գալիս, ամեն մարդու բերանից նոյն հարցն է. «անձրև կայ», «ցորենները լաւ են, թէ ոչ»: Բայց ահա քանի տարի է Երևանի հացաշատ նահանգը առատ տարի չէ տեսել, թէպէտ, կրկնում ենք, տարածվող լուրերը, սարսափը չափազանցրած են, յամենայն դէպս, սպասվող բերքի նկատմամբ: Եւ այդ բոլորը չը-նորհիւ ամբարատէրերի, չարչիների, կեղեքիչների, վաշխառուների: Այս է դրութիւնը հացի նկատմամբ:

Աւելի ծանր է կենդանիների կերակրի հարցը: Խոտ բացարձակապէս չը կայ. դաշտերը, բլուրները, սարերը մերկ են, բառիս բուն նշանակութեամբ: «Սար ու քար լաց են լինում», ինչպէս ասում է ժողովուրդը, իսկ դարման նոյնպէս չի լինի, որովհետև հացերը վնասված են: Ինչպէս յայտնի է, այդ երեք գաւառներում երկրագործութեան հետ համահաւասար զարգացել է: Զորութեան հետ չարունակվում են չոքերը և տաք քամիները: Շուկայ ցորեն չէ գալիս. եկած ցորենի անչնչան քանակութեան գինը օրից օր բարձրանում է. այսօր, ասում են, խալվարը ծախվեց 37 ռուբլիով:

Դարաչիչագի, Նոր-Բայազէտի և Աբարանի կողմերում այս տարի այնպէս աջող բուսել է ցանքը, որ գիւղացիները հիացած՝ չը գիտէին ինչ կերպ արտայայտել իրանց ուրախութիւնը: Եւ յանկարծ, վերջին ամիսը, երբ ցորենը պիտի հասնէր, սկսում է չորութեան հետ մի այնպիսի շոր, որ կանանչը դեղնում է և գլուխը թեքում դէպի ցած: Գիւղացին իզուր ամեն օր, ամեն բոպէ աչքերը գցած երկնքին անձրևի է սպասում. երբեմն-երբեմն կուտակվում են ամպեր, ընկնում են մի քանի կաթիլներ և ահա բարձրանում է քամին ու փախցնում ամպերը. գիւղացին յուսակտուր երեսը շուռ է տալիս: Եւ այսպէս, շարունակվում են շաբաթներ միմեանց ետևից: Կան տեղեր, որ կը տան, եթէ ոչ լաւ, գոնէ միջակ բերք: Բայց կան և այնպիսի տեղեր, որ եթէ մի երկու օր էլ անձրև չը գայ, ամեն բան վերջացած է: Ամեն կողմից էլ նոյն տեղեկութիւնն է գալիս, ամեն մարդու բերանից նոյն հարցն է. «անձրև կայ», «ցորենները լաւ են, թէ ոչ»: Բայց ահա քանի տարի է Երևանի հացաշատ նահանգը առատ տարի չէ տեսել, թէպէտ, կրկնում ենք, տարածվող լուրերը, սարսափը չափազանցրած են, յամենայն դէպս, սպասվող բերքի նկատմամբ: Եւ այդ բոլորը չը-նորհիւ ամբարատէրերի, չարչիների, կեղեքիչների, վաշխառուների: Այս է դրութիւնը հացի նկատմամբ:

Աւելի ծանր է կենդանիների կերակրի հարցը: Խոտ բացարձակապէս չը կայ. դաշտերը, բլուրները, սարերը մերկ են, բառիս բուն նշանակութեամբ: «Սար ու քար լաց են լինում», ինչպէս ասում է ժողովուրդը, իսկ դարման նոյնպէս չի լինի, որովհետև հացերը վնասված են: Ինչպէս յայտնի է, այդ երեք գաւառներում երկրագործութեան հետ համահաւասար զարգա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՆՉ Է ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆԸ

(Ըստ Ն. Միխայլովսկու)

IV

Այդպէս ուրեմն Սպէնսէր, ինչպէս ապացուցանում է Միխայլովսկի, սխալվում է հասարակութիւնը նմանեցնելով օրգանիզմի և, առաջադիմութեան օրէնքը սահմանելիս, ելակէտ ընդունելով ոչ զուարճութիւն ու տհաճութիւն զգալու ընդունակ անհատին, այլ հասարական գիտակցութիւնից ու զգայնութիւնից զուրկ հասարակութիւնը:

Ինչով բացատրել այդ սխալը:

Որովհետև Սպէնսէրի խելքի ոյժը անկասկածելի է, գրում է Միխայլովսկի, ինքն ըստ ինքեան հարց է ծագում,—արդարացի՞ է արդեօք նպատակադիտական տարրի արտաքսումը հասարակաբանական հետազօտութիւններից, կարող է արդեօք ուսումնասիրութեան օբյեկտիվ (արտանձնական) եղանակը տալ լաւ հետևանքներ հասարակագիտութեան մէջ: Գուցէ հասարակագէտը, այսպէս ասած, տրամաբանական իրաւունք չունի հեռացնել իր ուսումնասիրութիւններից մարդուն, ինչպէս որ նա կայ, նրա բոլոր վշտերով և բաղձանքներով. գուցէ օբյեկտիվ տեսակէտը, որ պարտադիր է բնական գիտութիւնների մէջ, բոլորովին անպէտք է հասարակագիտութեան մէջ, որի օբյեկտը (առարկան) նոյնն է, ինչ որ և սուբյեկտը (ուսումնասիրող անձը). գուցէ այդ նոյնութեան պատճառով մտածող անձը (սուբյեկտ) միայն այն դէպքում կարող է հասնել ճշմարտութեան, երբ լիովին ձուլվի մտածելի առարկայի (օբյեկտի) հետ և ոչ մի բոպէ չանջատվի նրանից, այսինքն մտնի նրա շահերի մէջ, ապրի նրա կեանքով, մտածի նրա խոհերով, զգացվի նրա զգացմունքներով, տառապի նրա տանջանքներով, լայ նրա արցունքներով: Հիմքեր կան կարծելու, թէ այդ ենթադրութիւնը ճիշդ է, և Սպէնսէրի շարադրութիւնները առատ ապացոյցներ են տալիս համոզելու համար, որ օբյեկտիվ մեթոդը, միակ արդիւնաւորը լինելով բնական գիտութիւնների մէջ, անզօր է հասարակագիտութեան մէջ:

Հետևեալ յօդուածներում Միխայլովսկի աշխատում է ապացուցանել սուբյեկտիվ մեթոդի անպայման անհրաժեշտութիւնը հասարակական գիտութիւնների համար: Մենք մի փոքր կանգ առանք յարգելի հասարակագէտի վարդապետութեան այդ, մեր կարծիքով, թոյլ կամ գոնէ վատ պատճառաբանված, կէտի վրա, ի նկատի ունենալով, որ այդ կէտը մեծ դեր էր խաղում վերջին տարիներս ռուս մարքսիստների և սուբյեկտիվիստների մէջ ծղված ջերմ բանակռուում:

Ի հաստատութիւն իր հայեացքի՝ Միխայլովսկի բերում է յայտնի ռուս հրապարակախօս Պ. Լ.-ի հետևեալ խօսքերը. «Օբյեկտիվ տարրը բարոյագիտութեան, քաղաքականութեան և հասարակագիտութեան շրջաններում սահմանափակվում է անձնաւորութեան գործողութիւններով, հասարական ձևերով ու պատմական դէպքերով: Նրանք ենթակայ են օբյեկտիվ նկարագրութեան և դասաբաշխման, բայց նրանց հասկանալու համար պէտք է քննել այն նպատակները, որոնց համար անձնաւորութիւնների գործողութիւնները միջոցներ են միայն, այն նպատակները, որոնք մարմնանում են հասարական ձևերում, այն նպատակները, որոնք առաջ են բերել պատմական դէպքերը: Բայց ինչ բան է նպատակը: Այդ ինչ որ մի բան է՝ ցանկալի, հաճելի, պարտաւորական: Այդ բոլոր ստորոգութիւնները (կատեգորիա) զուտ անձնական (սուբյեկտիվ) են և միևնոյն ժամանակ մատչելի են բոլոր անձանց: Հետևաբար,

*) Տես №№ 123, 125 և 128.

ցած է նաև անասնապահութիւնը, շնորհիւ գեղեցիկ արօտատեղերի, և այդ կողմերում անբերրի տարիներում գիւղացին ցորեն գնելու համար ծախում է եզը, կովը, ոչխարը և կամ ձին. իսկ այս տարի, որովհետև կենդանիների կերակուր բոլորովին չը կայ, հետևապէս նա չէ կարող ունենալ կենդանիներ։ Եւ այս է պատճառը, որ այժմ կենդանիները, մանաւանդ ոչխար և գառը, շատ էժան են ծախվում։ Քրդերը գլուխները կորցրել են և ոչխարները մեծ բանակութեամբ ծախում են, բայց թէ դրա վերջը ինչ կը լինի, շատ պարզ է—կողոպուտ, թալան։ Գազանային բնածին հակումներին կաւելանայ քաղցը, իսկ այդ դէպքում մարդ-գազանը անողոք է. սա ասպարէզ կընտրի անպաշտպան հայ գիւղերը թիւրքաց սահմանների մօտ։

Մեր կողմերում ոչ հացի առևտուրը և ոչ էլ կենդանիների ուտեստի—խոտի, դարմանի հարցը կանոնաւորել չէ լինում։ Եթէ, օրինակ, Ալէքսանդրօպոլում հացը առատ է, իսկ Երևանում քիչ, այդ հանգամանքը շատ քիչ նշանակութիւն կունենայ Երևանում գների վրա։ Սրա պատճառը այն է, որ հաղորդակցութիւնների յարմարութիւններ չը կան։ Լեռներով ու ձորերով կտրատված մեր երկիրը այնքան յետ է մնացել ճանապարհների կողմից, որ ձմեռները յարաբերութիւնը շատ տեղերի մէջ ընդհատվում է և այդ է պատճառը, որ 100 վերստ հեռաւորութեան վրա եղած հացը հնար չէ լինում էժան կերպով տեղափոխել կարիքի տեղը և այդպիսով հաւասարակշռութիւն պահպանել մեր քաղաքների և նրանց գնի մէջ։ Ահա այս տեսակէտից երկաթուղին, որը շուտով կարել անցնելու է Երևանի նահանգի ամբողջ երկարութեամբ, մեծ ծառայութիւն է անելու մեզ։

Ա—Դօ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

Յուլիսի 10-ին

Ի Տէր հանգուցեալ Թագաժառանգ Յէսարեվիչի մահվան գոյժը կայծակի արագութեամբ հասաւ մեր քաղաքը և սգով համակեց քաղաքի և գաւառի ազգաբնակութեան սրտերը, մանաւանդ այն պատճառով, որ շատերը տեսել էին հանգուցեալ Մեծ Իշխանին և արժանացել էին նրա առատ ողորմածութեանը Աբասթումանում և մեր քաղաքի շրջակայ Աբուլ, Խլգումա և այլ գիւղերում, երբ Նորին Բարձրութիւնը՝ ամառ ժամանակ ապրելով Տաքացխուր լեռի ափին՝ պըտոյտ էր անում մեր գաւառի հայ և դուխօբոր գիւղերում։ Մի օր, հէնց որ լուր հասաւ քաղաք, թէ Թագաժառանգ Յէսարեվիչը իր շքախմբով միասին հանգստանում է մի աղքատ գիւղացու խրճիթում, Խլգումա հայ-կաթոլիկ գիւղում, որ քաղաքից մի ձորով է միայն բաժանված, իսկոյն մեր քաղաքը զարդարվեց դրօշակներով, և մեծ բազմութիւն թափվեց Խլգումա գիւղը՝ ողջունելու Մեծ Իշխանին. քաղաքացի և գիւղացի ժողովուրդը ոգևորված ցոյցեր արաւ Նորին Բարձրութեան պատուին և արժանացաւ Բարձր Ա.ցեալուի շնորհակալութեանը։ Հանգուցեալ Մեծ Իշխանը այդ ժամանակ իր պարզ, սիրալիր և քաղցր վերաբերմունքով շատ վեհ տպաւորութիւն արաւ և անջնջելի յիշատակ թողեց ժողովրդի սրտերում։

Յունիսի 29-ից սկսած՝ Ախալքալաքի հայ հոգևորականութիւնը, բազմաթիւ աղօթողների ներկայութեամբ, հոգեհանգիստ է կատարում ամեն օր։ Յուլիսի 7-ին, հանգուցեալ Թագաժառանգի յուղարկաւորութեան օրը, նոյն հոգևորականութիւնը, մեծ բազմութեան և ծառայող դասակարգի ու քաղաքային վարչութեան ներկայութեամբ, բացօդեայ հոգեհանգիստ կատարեց քաղաքային այգում։ Հոգեհանգիստներ կատարվեցին և գաւառի բոլոր գիւղերում։

Սալլիմեան

ՆԱՄԱԿ ՕԴԷՍԱՑԻՑ

Յուլիսի 2-ին

Ռուսաց սովեալների օգտին եղած նուիրատուների ցանկում անշուշտ առաջին տեղերից, կարելի է նոյն իսկ ասել՝ առաջին տեղն է բռնում տեղիս կալուածատէր հայազգի պ. Անուշը, որի խոշոր նուիրատուութիւնը մի ամսից աւելի է բաւականին խօսելու նիւթ է տուել տեղական մամուլին, որը մեծ հավակրանքով է վերաբերվում դէպի պարոնի մարդասիրական գործը։

Պ. Անուշի նուէրը կարելի է հաշուել աւելի քան յիսուն, մինչև իսկ հարիւր հազար ռուբլի։ Զը բաւականանալով միայն նիւթական զոհաբերութիւնով, Անուշը յանձն է առել անձամբ ուղևորվելու դէպի սովի վայրը և անձամբ, իր մարդկանցով, իր հաշուով վերցրած բժիշկների և օգնականների, այլ և ողորմած բոյրերի խմբերով՝ կատարել քաղցածներին կերակրելու և սովից հիւանդացածներին բժշկելու, խնամելու դժուարին գործը։ Նա արդէն ուղարկել է սովից տանջվող երկու գաւառները 50 վագոնից աւելի, մօտ 30 հազար պուդ ալիւր, մի քանի հազար ռուբլու գետնախնձոր և այլ ուտելեղէններ, իսկ ինքը ճանապարհ է ընկնում հետն առած բժիշկների մի ամբողջ խումբ և բժշկական բոլոր անհրաժեշտ պիտոյքներ, բոլորն էլ իր ծախսով։ Մօտաւորապէս հաշուելով, այս ամենը 100 հազարից էլ կանցնի։

Ահա միանգամայն օրինակելի գործադրութիւն որոշը։ Ինչպէս, մի կողմից, կայ փոխանցումն պարզից բարդը, այնպէս միւս կողմից ներկայանում է փոխանցումն անկարգութիւնից դէպի կարգաւորութիւնը, անորոշ կողմակերպութիւնից դէպի որոշը։ Զարգացման պրոցէսսի մէջ, ինչ շրջաններում էլ արտայայտվելիս լինի նա, լինում է ոչ միայն աստիճանական բազմացումն տարբեր մասերի, այլ և աստիճանական աճումն բացայայտութեան, որով որոշվում են այդ մասերը իրարից։ Այդպիսով զանազանատեսակութեան՝ զարգացումը բնորոշող սաստկացումը տարբերվում է զանազանատեսակութեան այն սաստկացումից, որ զարգացման նշան չէ կազմում»։

Փոխանցումն անորոշից դէպի որոշը, շարունակում է Սպէնսէր, առաջնական երևոյթ չէ, այլ երկրորդական, լինելով միայն «հետևանք, որ ուղեկցում է որոշեալ փոփոխութիւնների վերջաւորութեանը»։ Որպէս զի մի որ և է միապաղաղ ամբողջութիւն կերպարանափոխվի ու դառնայ մի խմբակցութիւն զանազանատեսակ մասերի, անհրաժեշտ է այդ մասերի անջատումը։ Բայց քանի տեղի ունի այդ անջատողական առաջադիմութիւնը, որոշութիւնը անհնարին է։ Նա երևան կը գայ միայն այն ժամանակ, երբ ամեն մի զատված մասի մէջ վերջանայ ամբողջացման (ինտեգրացիայի) աշխատանքը, այսինքն երբ ի մի ձուլվեն այն տարրերը, որոնք կազմում են այդ այլ և այլ զատված մասերը։

Այնուհետև մի լրացումն էլ մտցնելով իր ասմանման մէջ, Սպէնսէր գալիս է այն եզրակացութեան, թէ «զարգացումը փոխանցումն է անորոշ, անկապ միատեսակութիւնից դէպի որոշ, կապակից զանազանատեսակութիւն՝ անընդհատ տարբերացումների և ամբողջացումների միջոցով»։

Միխայլովսկի մի նոր առարկութիւն է անում Սպէնսէրի դէմ։ Մինչև այժմ պնդում էր, թէ, եթէ ցանկանանք գտնել մի ընդհանուր, միատեսակ բանաձև բոլոր երևոյթների զարգացման համար, պէտք է ընդունենք, որ անհատի զարգացումը հակասում է հասարակութեան զարգացման։ Այժմ նա ասում է, թէ, եթէ ենթադրենք, որ եւրօպական տէրութիւնները հետզհետէ աւելի ու աւելի սերտ կապակցվելով կազմելու են ապագայում մի ընդհանուր դաշնակցութիւն (Սպէնսէր արդէն տեսնում է այդ դաշնակցութեան սկզբնական ատիճանը երկաթուղի դաշինքների, հաշտ եղանակով վէճերը վերջացնելու ձգտման, առևտրական և ուրիշ յարաբերութիւնների հեշտացման և յաճախացման մէջ և այլն), որ գնալով կարող է աւելի ու աւելի ընդարձակվել, կը տեսնենք, որ տէրութեան զարգացումը հակասելով մի կողմից անհատի զարգացման, հակասում է միւս կողմից այդ աւելի մեծ ամբողջութեան զարգացման։ Ուրիշ կերպ ասած, մի և նոյն երևոյթը կարող է մեզ առաջադիմական կամ ընդհակառակը յեսադիմական թուալ, ըստ Բէրի բանաձևի, նայելով թէ մենք, որ ամբողջութեան տեսակէտից ենք նայում այդ երևոյթի վրա՝ անհատի, տէրութեան, թէ տէրութիւնների դաշնակցութեան։

Այդ դժուարութիւնից կարելի է դուրս գալ, Միխայլովսկու կարծիքով, միմիայն ընդունելով սուբյեկտիվ մեթոդը, մտցնելով ուսումնասիրութեան մէջ նպատակագիտական տարրը և նայելով երևոյթներին անհատի բախտաւորութեան տեսակէտից։

Եթէ, ասում է Միխայլովսկի, թողնենք օբյեկտիվ տեսակէտը, եթէ, ընդունելով, որ հասարակութիւնը, իբրև ոչ իրական անձնաւորութիւն, ոչ ապրում է, ոչ մեռնում, ոչ տանջվում, ոչ հրճվում, վերցնենք իբրև կենտրոնական կէտ մեր ուսումնասիրութեան՝ մտածող, զգացող և ցանկացող իրական անձնաւորութիւնը, բնականօրէն կը գանք այն եզրակացութեան, որ առաջադիմական է միայն այն շարժումը, որ աւելացնում է այդ անձնաւորութեան զուարճութիւնների քանակութիւնը և պակասացնում է նրա տհաճութիւնների թիւը։ Իսկ այդ հետևանքն է ունենում միայն այն շարժումը, որ պահպանում և զարգացնում է անհատի գործարանների, ոյժերի և ընդունակութիւնների հաւասարակշռութիւնը և բազմակողմանիութիւնը։ Ընդհակառակը ամեն ինչ, որ խանգարում է գործարանների հաւասարակշռութիւնը, որ զարգացնում է մի գործարան ի վնաս մի ուրիշի, հիւանդոտ ազդեցութիւն է գործում անհատի վրա, խլելով նրանից ամենամեծ բարիքը—առողջութիւնը։ Բացի այդ՝ հաւասարակշռութեան այդ խանգարումը ստորադրում է մի անձ կամ անձնաւորութիւնների մի խումբ՝ մի ուրիշի, որ կարողացել է զարգացնել իր մէջ աւելի նպաստաւոր ֆիզիոլոգիական ընդունակութիւն, այնպէս որ առաջին անձը կամ խումբը դառնում է աւելի կամ պակաս դիմակաւորված ստրուկ երկրորդի։ Վերջապէս, քանի որ ամեն մի գործարանի բնական ֆիզիոլոգիական գործունէութիւնը զուարճութեան աղբիւր է կազմում, պարզ է, որ անհատը այնքան աւելի բախտաւոր է, որքան աւելի լրիւ և բազմակողմանի է կատարվում նրա մէջ այդ ֆիզիոլոգիական գործունէութիւնը։

Մեր դրած հարցին, թէ ինչ է առաջադիմութիւնը, վերջացնում է Միխայլովսկի, մենք պատասխանում ենք,—Առաջադիմութիւնն է աստիճանական մօտեցումն դէպի անհատների ամբողջականութիւնը, աշխատանքի հնարաւորագոյն լի և բազմակողմանի բաժանումն անհատի գործարանների մէջ և հնարաւորագոյն նուազ բաժանումն անհատների մէջ։ Անբարոյական է, անարդար է, մնասակար և անբանական է ամեն ինչ, որ արգելք է լինում այդ շարժման։ Բարոյական է, արդարացի է, բանական է և օգտակար ամեն ինչ, որ նուազեցնում է հասարակութեան զանազանատեսակութիւնը, զօրացնելով դրանով հասարակութեան առանձին անդամների բազմակողմանիութիւնը։

Տ. Յովհաննիսեան

*) Զգուշացնում ենք այն ընթերցողներին, որոնք անմիջապէս ծանօթ չեն Սպէնսէրի գրուածքների հետ, վերջնական կարծիք չը կազմել Սպէնսէրի տեսութեան մասին, ինչ վերաբերում է մանաւանդ մանրամասներին, այս յօդուածների հիման վրա։ Միխայլովսկի լուսաբանում է Սպէնսէրի տեսութիւնը, բանակռիւ մղելով և՝ որ գլխաւորն է՝ ձեռքի տակ ունենալով Սպէնսէրի շարադրութիւնների հին հրատարակութեան թարգմանութիւնը։ Մենք երևի առիթ կունենանք յետոյ խօսել Սպէնսէրի մասին առանձին։

Տ. Ց.

հեղութիւնը ամեն հնարաւոր տեսակէտներով էլ համարվում է տխրալի երևոյթ։ Բայց այդ բոլոր տեսակէտներն էլ սուբյեկտիվ են։ Նրանք բոլորն էլ քննում և գնահատում են երևոյթները կապելով նրանց մարդկային բախտաւորութեան մասին ունեցած որոշ գաղափարի հետ։ Բայց Սպէնսէր բոլորովին հեռացրել է հարցից մարդկային բախտաւորութիւնը։ Այդ օբյեկտիվ տեսակէտը հասցրել է նրան այն համոզմունքին, թէ առաջադիմութիւնը փոխանցումն է միատեսակից դէպի զանազանատեսակը։ Եւ սակայն, հասնելով մի որոշ երևոյթի, որ իսկ և իսկ այդպիսի փոխանցումն է ներկայացնում, նա հրաժարվում է այդ երևոյթը առաջադիմական համարելուց։ Բայց ինչու։

Պարզ է, որ Սպէնսէր չի կարողացել մնալ օբյեկտիվ մեթոդի բարձրութեան վրա, և, հակառակ իր խոստման, ունի իր որոշ սուբյեկտիվ հայեացքները առաջադիմութեան մասին, որոշ նպատակագիտութիւն է մտցնում իր դատողութիւնների մէջ, ունի իր իդէալը հասարակական յարաբերութիւնների մասին։

Այդ հակասութիւններից Սպէնսէր դուրս է գալիս չը լուծելով հարցը, այլ կտրելով Գորդեան հանգոյցը *)։ Հանդիպելով այնպիսի փաստի, որ կան փոխանցումներ միատեսակից դէպի զանազանատեսակը, որ ինքը չէ կարողանում համարել առաջադիմական փոփոխութիւն, նա առանց այլևայլութեան և մեկնումների ասում է. «Ամեն մի զարգացումն ներկայացնում է փոփոխութիւն միատեսակից դէպի զանազանատեսակը և միանգամայն փոփոխութիւն անորոշից դէպի

*) Զգուշացնում ենք այն ընթերցողներին, որոնք անմիջապէս ծանօթ չեն Սպէնսէրի գրուածքների հետ, վերջնական կարծիք չը կազմել Սպէնսէրի տեսութեան մասին, ինչ վերաբերում է մանաւանդ մանրամասներին, այս յօդուածների հիման վրա։ Միխայլովսկի լուսաբանում է Սպէնսէրի տեսութիւնը, բանակռիւ մղելով և՝ որ գլխաւորն է՝ ձեռքի տակ ունենալով Սպէնսէրի շարադրութիւնների հին հրատարակութեան թարգմանութիւնը։ Մենք երևի առիթ կունենանք յետոյ խօսել Սպէնսէրի մասին առանձին։

Տ. Ց.

ՆԱՄԱԿ ՏՂՎԻԱՒԻՑ

Յուլիսի 14-ին

Գօրու գաւառի Տղվիաւ գիւղի հայ հասարակութիւնը յուզված է հետևեալ անարդարացի գործից։ 1894 թուին, յունիս ամսին, վերոյիշեալ հայ հասարակութիւնը իրաւունք ստացաւ վերանորոգելու՝ ս. Նշան անուանեալ եկեղեցին, բայց զանազան հանգամանքների պատճառով միայն այս յուլիսի սկզբներին սկսեցին վերանորոգել։ Հէնց վերանորոգութեան առաջին օրից տեղական վրացի իշխաններից մէկը, Միքայէլ Երիստով, սկսեց արգելել վերանորոգութիւնը պնդելով, որ իբր թէ այժմեան հայոց այդ ս. Նշան եկեղեցին պատկանում է իրանց ցեղին, իր ամբողջ գաւիթով, որ ի հնուց հայոց գերեզմանատուն է։ Այդ տեսակ մի անարդարացի պնդումը բոլորովին ապշեցրեց թէ տեղիս և թէ շրջակայ հայ և վրացի հասարակութեանը, որովհետև ամենքը, թէ ծեր և թէ մանուկ անխտիր, գիտեն, որ այդ եկեղեցին, որը մի և նոյն ժամանակ ուխտատեղի է և՝ ուր յաճախում են և վրացիք, պատկանում է ի հնուց հայերին։

Սկսվեց երկու կողմից էլ քննութիւն թէ մարմնաւոր և թէ հոգևոր իշխանութեան միջոցով։ Քննութեան ժամանակ, նոյն իսկ վրացիք հաստատեցին, որ այդ եկեղեցին հայոց է պատկանում ի հնուց, և իրօք, 1812-ից սկսած, ինչպէս ցոյց են տալիս եկեղեցական մատեանները, ս. Նշան եկեղեցու շտատով հովել են 15 քահանայ։ Բացի դրանից եկեղեցու արևելեան պատի մէջ գտնվում է երկու հայկական խաչքար, մինը ՁԺ=910+551=1461 Փրկչական թուին քանդակած, որի տակը քանդակագրած է «ս. Նշանդ բարեխաւս...», իսկ միւսի վրա երևում է Ձ=900+551=1461 թիւը։ Ինչպէս ընթերցողն էլ կը նկատի, տեղիս հայերը 15-երորդ դարի գաղթականութեան են պատկանում։

Շատ հետաքրքիր է իմանալ թէ ինչ կասեն Ճավճավաձէ և ընկերները այս դէպքի մասին. արդեօք հայերն են յափշտակում վրաց եկեղեցիները, թէ ընդհակառակը, և արդեօք լաւ է երկու դարաւոր և սիրով ապրող հարևան ազգերի մէջ երկպառակութեան սերմեր գցել, որ այստեղ արդէն պտուղներ էլ տուել։ Մօտ օրերս վրացի գիւղացիներից մէկը անպատուեց թէ հայոց եկեղեցին և թէ տեղական Ներսէս քահանայ Փալէլեանցին։ Վերջինս, որ միակ դիմադրում է բոլորին, իր պատիւը վերականգնելու համար, դիմեց հաշտարար դատաւորին։

Տեղիս և շրջակայ գիւղերի թէ հացի հունձը և թէ մրգերի բերքը, որի վաճառումը սրանց գլխաւոր աղբիւրն է ապրուստի, առատ է. անցեալ տարի ամեն բանից զրկվեցին։

Յ. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ, ուրբաթ, յուլիսի 16-ին, Թիֆլիսի հայոց Վանքի մայր եկեղեցում, թեմական առաջնորդ Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանի մասնակցութեամբ, կատարվեց ի Տէր հանգուցեալ Թագաժառանգ Յեսարեվիչ Գէօրգի Ալէքսանդրովիչի հոգեհանգիստը, բազմաթիւ աղօթողների ներկայութեամբ։

—

Մեր ընթերցողներին յայտնի է, որ Ղզլար քաղաքը գտնվում է Տերեկ գետից աւելի ներքև. գետը երբեմնապէս պատռում է այն պատնէշները, որ կառուցված են ջրի հոսանքը արգելելու նպատակով և ողողում է հազարաւոր դեսեատին տարածութիւններ։ Նորերս նշանակված էր 50,000 ռուբլի գումար այդ պատնէշները նորոգելու, ամրացնելու և լրացնելու համար։ Բայց դեռ չը վերջացրած՝ ամբարտակից ջուրը կրկին խլեց 8 սաժէն տեղ և բացեց իր հեղեղների համար նորից ճանապարհ։ Մինչդեռ նշանակված 50,000 ռուբլի գումարը արդէն սպառված է։

—

«Казбекъ» լրագիրը հաղորդում է, որ կովկասեան կառավարչապետ իշխան Գ. Գոլիցին վերադարձել է Էսէնտուկիի հանքային ջրերը յատուկ յանձնարարութիւնների պաշտօնեայ իշխան Կուրակինի ուղեկցութեամբ։

—

Մեր ընթերցողներին յայտնի է, որ Ղզլար քաղաքը գտնվում է Տերեկ գետից աւելի ներքև. գետը երբեմնապէս պատռում է այն պատնէշները, որ կառուցված են ջրի հոսանքը արգելելու նպատակով և ողողում է հազարաւոր դեսեատին տարածութիւններ։ Նորերս նշանակված էր 50,000 ռուբլի գումար այդ պատնէշները նորոգելու, ամրացնելու և լրացնելու համար։ Բայց դեռ չը վերջացրած՝ ամբարտակից ջուրը կրկին խլեց 8 սաժէն տեղ և բացեց իր հեղեղների համար նորից ճանապարհ։ Մինչդեռ նշանակված 50,000 ռուբլի գումարը արդէն սպառված է։

—

«Казбекъ» լրագիրը հաղորդում է, որ կովկասեան կառավարչապետ իշխան Գ. Գոլիցին վերադարձել է Էսէնտուկիի հանքային ջրերը յատուկ յանձնարարութիւնների պաշտօնեայ իշխան Կուրակինի ուղեկցութեամբ։

—

Ծրագրված է երկաթուղու մի նոր գիծ, որ պէտք է անցնի Սև ծովի արևելեան ափով։ Ներկայումս կատարվում են հետազօտութիւններ որոշելու գծի անցնելու տեղերը և տեղական հողային և ուրիշ հանգամանքները։ Լսվում է, որ այդ երկաթուղու գծի շինութիւնը յանձնվում է ինժենէր Վուրցելին, որը շինեց Թիֆլիս-Կարսեան երկաթուղին։

—

Կարսից հեռագրում են «Новое Обозр.»-ին. «Այսօր աջողութեամբ հասաւ երկաթուղու առաջին գնացքը։ Քաղաքը հանդիսաւոր ընդունելութիւն էր պատրաստել։ Գնացքը գալուց մի ժամ առաջ անձնասպանութիւն գործեց Կարսի կայարանը կառուցանող յայտնի Բաֆիլով։ Անձնասպանութիւն կատարելուց մի փոքր առաջ նա անբաւականութիւն էր ունեցել երկաթուղու վարչութեան հետ, փողի վերաբերմամբ։»

—

«Մշակի» № 127-ի ներքին լուրերի բաժնում տպագրել էինք Շուշուց ուղարկված մի լուր Խեմական դպրոցի տեսուչ հ. Տիրայրի և աստուածաբան Արշակ Տէր-Միքայէլեանի պաշտօններից հեռանալու մասին։ Այդ առիթով Շուշու թեմական յաջորդ Մատթէոս վարդապետը հեռագրով խնդրում է մեզ յայտնել, որ լսված լուրը սխալ է։

—

«Черноморскій Вѣстникъ» լրագիրը հաղորդում է, որ յուլիսի 3-ին, Վերին-Աջարայի տեղական ոստիկանութեան աջողվեց սպանել աւազակ Խանդար Կօնդախչի օղլուն և վիրաւորել Իլիաս Դուրսուն օղլուն։ Այդ աւազակները պատկանում են յայտնի Մեվլիւդի խմբին։ Ոստիկանութեան կողմից ծանր կերպով վիրաւորվել է միլիցիոներ Ահմեդ Կիկավա։

—

Բաթումի և Արդուինի շրջականներում ահա մի քանի շաբաթ է, որ տիրում է երաշտ, որից վնասվել է դաշտերի և այգիների բուսականութիւնը։ Վերջին օրերը եկաւ անձրև, որ միայն մասամբ օգնեց բուսականութեան աճման։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Բագուի հայ դրամատիկական ընկերութեան անդամները տուին Խանդամիրեանցի թատրոնական դահլիճում, յունիսի 20-ին, «Խանում», 27-ին «Օրվայ չարիք» և յուլիսի 13-ին «Արդիւնաւոր պաշտօն» պիեսաները։ Օստրովսկու «Արդիւնաւոր պաշտօն» կօմեդիան լցրել էր թատրոնը ծայրէ ի ծայր ինտելիգենտ հասարակութեամբ։ Դերակատարներից աչքի ընկան պ. Պետրոսեան, տ. Զաբէլ և տ. Մէլիքեան։ Հանդիսականները, որոշ ժամին իրանց տեղերը չը բռնելով, խանգարում էին լսողներին։ Ամսիս 16-ին կը խաղան «Օթէլլո»։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Ներկայումս քաղաքիս հայ հասարակութեան հետաքրքրութեան գլխաւոր առարկան այն է, թէ Վեհափառ Հայրապետի տուած խոստումը ինչպէս կիրագործվի. արդեօք Տիրայր վարդապետը յետ կը կանչվի, թէ նորից, հակառակ ժողովրդի ցանկութեան, տեսուչ կը նշանակվի։ Հասարակութեան բանիմաց մասը, հիմնվելով հայր Մատթէոսի Վեհափառին ներկայացրած զեկուցման վրա, գոնէ այնպէս է կարծում, որ անպատճառ Տիրայր վարդապետին յետ կը կանչեն. սակայն ով գիտէ Վեհափառ Հայրապետին շրջապատող վարդապետների տրամադրութիւնը։ Այսքանը պարզ յայտնի է, որ Տիրայրի տեսչութեան օրով դպրոցը բոլորովին շեղվել է իր կանոնաւոր ընթացքից, և հասարակութեան առաջ դպրոցի վարին այնպէս է ընկել, որ ժողովուրդը այլ ևս չէ վստահանում իր զաւակներին ուղարկել այնտեղ։ Ինչպէս անցեալ տարի, այնպէս և այս տարի աւարտեցին դպրոցը մի միայն հինգ աշակերտ. դասարանում աւելի աշակերտ չը կար։ Այդ 5 աշակերտի համար դպրոցը ծախսում է տարեկան 15—16 հազար ռուբլի։ Շուշու դպրոցը այժմ նիւթական ճգնաժամի մէջ է։ Դպրոցի մուտքը չէ ծածկում ծախսը. շարունակ ամեն տարի հոգաբարձութիւնը դէֆիցիտ է ունենում 2000—3000 ռուբլի։ Դպրոցում ծառայողները չեն կարողանում լրիւ ստանալ ռոճիկ, այլ մաս-մաս են ստանում։ Այդպիսի դրութիւնը առաջացել է կեանքի փափկութիւն սիրող թերուս և մի և նոյն ժամանակ մեծամիտ փարաջուր տեսչի շնորհիւ. նա ժողովրդին ասում է թէ փող տուէք, բայց գործի մէջ մի մտէք, հաշիւ մի պահանջէք. չէ որ տուողը իրաւունք ունի և՛ հաշիւ պահանջել և՛ գործի մէջ խառնվել։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Սալմաստ, յուլիսի 1-ին

Ատրպատականի ռուսաց ընդհանուր հիւպատոս պ. Պետրով շուտով գնալու է Ուրմի՝ այնտեղի գործերի հետ ծանօթանալու։

Հացի գինը շարունակում է մնալ բարձր, չը նայելով որ հունձը լաւ է այս տարի և արդէն հասած, բայց տիրող անապահովութեան պատճառով հնձողներ չեն եկել դեռ և ցորենը մնում է անքաղ։

Թիւրքաց Շահբէնդէրը անցեալ օր Բաշկալա ուղարկվեց՝ գործերի դրութիւնը ուսումնասիրելու և վերադառնալով պաշտօնապէս յայտարարեց Սալմաստի Սարփաբաստին՝ թէ քիւրդերը մեծ գրգռման մէջ են և պատրաստվում են յարձակում գործելու Սալմաստի գիւղերի վրա։ Այս դրժբաղդ երկրի սովատանջ ժողովուրդը հազիւ թէ իր օրական հացը հայթայթելու մասին մտածելու կարողութիւն ունի ներկայումս և բոլորովին անտարբեր է ուրիշ որ և է հարցի նկատմամբ։ Թերևս Շահբէնդէրի խօսքին այժ տալու համար, Շարաֆ-աղայի քիւրդերից 30 ձիաւոր աւազակներ հետևեալ օրը, լոյս արևով, յարձակվեցին Վարդան հայաբնակ գիւղի վրա և սպանեցին 2 մարդ տեղն ու տեղը, երկուսին էլ մահաբեր կերպով վիրաւորված թողնելով։ Բարեբաղդաբար գիւղի աղան, որ մի բարեսիրտ չէյխ է, միջամտում է, խնդրելով խնայել անմեղ մարդկանց և ընդհանուր կոտորածի չէ հասնում բանը այս անգամին։ Մի քանի օր առաջ էլ արդէն նոյն գիւղում մի քիւրդ մի հայ երիտասարդին սպանել էր բոլորովին զուր տեղը և նրա ընկերոջն էլ ծանրապէս վիրաւորել էր։ Այս երկու արիւնահեղ դէպքերից յետոյ վարդանցիները թողեցին իրանց գիւղը և փախան, մինչև անգամ հասած հունձն էլ անքաղ թողնելով։

Սալմաստի դրութիւնը օրից օր կրիտիկական է դառնում և լքումը ու յուսահատութիւնը ամենուրեք տիրապետում է, աչքի առաջ ունենալով այս փաստը, որ թշնամին ու աւերիչը հզօր է, լաւ զինված և կազմակերպված, իսկ պարսից կառավարութիւնը տկար, ապիկար և բոլորովին անտարբեր այս կողմերը պատահած յոյժ կարևոր անց ու դարձվածներին և դէպքերին հանդէպ։ Դիվանում այսօր մեծ սարսափ կար թուրքերի մէջ, որովհետև Խոյի ճանապարհին քիւրդ աւազակները չորս վաճառականների վիզերը կտրել են և դեռ ակնդէն է երկանց։ Եթէ այսպէս շարունակվի դրութիւնը՝ օսմանեան քիւրդ հրոսակախմբերը կարող են մի շաբաթում ամբողջ Սալմաստն աւերել և տիրապետել այս բարեբեր, գեղեցիկ դաշտային երկիրը։ Ա.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ինչպէս յայտնի է, Միլիերանի մտնելը մինիստրութեան մէջ պառակտումն առաջ բերեց սոցիալիստ կուսակցութեան մէջ։ Սոցիալիստների մի մասը՝ Ժորէսի և Վիվեանիի առաջնորդութեամբ, հաւանութիւն տուեց այդ քայլին, իսկ միւս մասը, որի թւում գեղիստները, բլանկիստները և կոմունիստների դաշնակցութիւնը, համարում է այդ կօմպրոմիս բուրժուական կուսակցութեան հետ։ Այդ տարաձայնութիւնը լուծելու համար Ժորէս առաջարկեց գումարել ընդհանուր ժողով ամբողջ ֆրանսիական սոցիալիստ կուսակցութեան։ Այդ առաջարկութիւնը հաւակրութիւն գտաւ և ժողովը, ինչպէս ենթադրում են, կը գումարվի սեպտեմբեր ամսին։

—Բավարիայում հետզհետէ սաստկացող անջատականութիւնը (պարտիկուլարիզմ) բաւական վրդովեցնում է դերմանական կիսապաշտօնական մամուլի հանդստութիւնը։ Նորերս կայացած բանուորական ընտրութիւնները պատգամաւորների ժողովի համար՝ վերջացան կենտրոնի և անջատականների կուսակցութիւնների կատարեալ յաղթութեամբ։ Բավարական կղերականների պաշտօնական օրգան «Neue Bairische Zeitung»-ում այդ առիթով տպված յօդուածը կատարեալ ֆիլիպիկա է պրուսացիների դէմ։

—«Journal des Débats» լրագրի Բէնի թղթակիցը հետևեալ հետաքրքիր մանրամասնութիւններն է պատմում Դրէյֆուսի մասին։ Նա զբաղված է բոլոր ժամանակ իր գործին վերաբերեալ զանազան դօկումենտների կարդալով։ Թղթակցի ասելով, բանտարկեալը այնքան յափշտակված է իր գործով, որ միայն մի քանի րօպէով է դադարում, այն էլ ամուսնու այցելութեան ժամանակ։ Դրէյֆուս վեր է կենում քնից շատ վաղ և իսկոյն սկսում է աշխատել։ Նա միայն կէս գիշերին կամ ժամի մէկին է հանգչում իր ճրագը։ Չը նայած այն տանջանքներին, որ նա կրել է Սատանայի կղզու վրա, նա մեծ եռանդով է աշխատում, այնպէս որ զարմանք է պատճառում շրջապատողներին։ Բանտարկեալին կերակուր է տրվում մեծ քանակութեամբ, բայց նա շատ քիչ է ուտում, երևի գրգռված լինելու պատճառով, բայց դրա փոխարէն նա սովորականից անհամեմատ շատ է ծխում։ Բանտի հանդէպ գտնվում է մի կաչվէ գրծարան, որի պատուհաններից լաւ երևում է բանտի բակը, որտեղ Դրէյֆուս երբեմն զբօսանքներ է կատարում։ Գործարանում ժողովվում են զանազան տեղերից շատ հետաքրքրվողներ և լուսանկարիչներ՝ Դրէյֆուսին նայելու։ Այդ պատճառով, բանտի կառավարչի կարգադրութեամբ, բանտի պատի վրայից լայն կտաւ քաշեցին, որպէս զի Դրէյֆուսով հետաքրքրվողները հնարաւորութիւն չունենան նրան տեսնելու։ Թղթակիցը աւելացնում է, որ Դրէյֆուս անհամբերութեամբ է սպասում այն օրին, երբ պատրաստ կը լինի նրա կապիտանական համազգեստը։

—«Figaro» լրագիրը հաղորդում է, որ Բուադէֆր և Գոնզ գեներալները գնացին Բէնն, անցկացրին այնտեղ մէկ ամբողջ օր և ընդունելութիւն գտան մէկ օֆիցէրի մօտ, որը նշանակված է դատաւոր Դրէյֆուսի գործում։ Ինչպէս ասում են, զինուորական մինիստրը այդ մասին բացատրութիւն է պահանջել օֆիցէրից։

—Էստէրհազի շարունակում է սպառնալ իր նախկին մեծաւորներին։ Նա ասում է, որ այն գործակալը, որ գերմանական դեսպանատնից բօրդերօն բերեց զինուորական մինիստրութիւնը,—մի գերմանահպատակ էր, և սպառնում է յայտնել նրա անունը։

—Ամբողջ եւրօպական մամուլը պախարակում է Միլանի բռնած դիրքը։ Միայն ունպարական պաշտօնական և կիսապաշտօնական լրագիրներն են, որ աշխատում են մեղմացնել իրանց կայսրի «բարեկամ» Միլանի արարմունքը։ Միլանին պախարակողների թւումն է նաև Վիէննայի «Arb. Zeitung» լրագիրը, որը ամբողջ դաւադրութիւնը համարում է «ստոր խարեբայութիւն», իսկ իրան Միլանին—«հին խարդախ»։ «Agram. Zeitung» լրագիրը ի միջի այլոց շեշտում է այն բանի վրա, որ ձերբակալութիւնները սկսվել են աւելի վաղ, քան Կենեժեվիչ հարց ու փորձի ենթարկվեց, ուրեմն, աւելացնում է լրագիրը, սերբիական կառավարութիւնը ղեկավարվում է ոչ թէ նրա ցուցմունքներով, այլ իր սեփական եզրակացութիւններով։ «Temps» լրագիրը ասում է, որ սերբիական կառավարութեան վարմունքը դէպի Գրուիչ՝ մի վիրաւորանք է պաշտօնական Ռուսաստանի հասցէին, որտեղ Գրուիչ եղել է դեսպան, և որի բարեկամական յարաբերութիւններից օգտվել է շատ երկար տարիներ։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Թղթէ ատամներ։ Գերմանացիները, որ սովոր են ամեն բանի մէջ խնայողութիւն անել, չէին կարողանում հաշտվել այն բանի հետ, որ շինծու ատամները, որոնք պատրաստվում են ոսկրից կամ յախճապակից, բաւական թանդ են, հետևաբար և անմատչելի շատերի համար։ Այդ պատճառով վերջին ժամանակներս գերմանացի ատամնաբոյժերը սկսել են ատամներ պատրաստել թղթից, որոնք, ինչպէս ցոյց են տուել փորձերը, աւելի դիմացկուն են, քան թէ ոսկրից պատրաստածները և որ գլխաւորն է՝ այնքան էժան են, որ մատչելի են ամենավերջին չքաւորին անգամ։

* * *

Ցօնկինում թագաւորական մի մեծ հանդիսի ժամանակ երկու ճանապարհորդ ձերբակալվեցին, որոնք, ինչպէս երևաց բանից, մտադիր են եղել հանդէսի լուսանկարը հանել։ Ճանապարհորդներին բաց թողեցին յետոյ, միայն զգուշացնելով, որ ոչ ոք իրաւունք չունի տեսնելու «երկնքի որդու» երեսը։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

15 յուլիսի

ԱՆՏԻՎԱՐԻ։ Առաւօտեան 10 ժամին տեղի ունեցաւ պրինցուհի Իտտայի ուղղափառութիւն ընդունելու ծիսակատարութիւնը։ Ներկայ էին Դանիլօ և Միրկօ Իշխանները, Նէպօլիտանիան դուքսը, Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչ։ Պալատից մինչև ս. Նիկոլայի եկեղեցին կանգնած էր ժողովրդի անգին ամբոխ, որը ողջունում էր նորափեսային և նորահարսին։

ՑԵՏԻՆԻԷ։ Ֆրանսիական, աւստրօ-ունգարական և անգլիական դեսպանների ու բօլգարական գեներալ Նիկոլիեվի պաշտօնական ընդունելութեան ժամանակ իշխան Նիկոլայ պարգևեց Ընդանց Դանիլիի առաջին աստիճանի շքանշանը։ Քաղաքի փողոցները ծածկված են ժողովրդի անգին բազմութեամբ։ Քաղաքը հրաշալի կերպով զարդարված է։

ՍՕՖԻԱ։ Երէկ, Ցեսարեվիչի թաղման առիթով, ռուսաց հիւպատոսարանի եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց, ներկայութեամբ խորհրդի նախագահի և մինիստրների։

ՊԱՐԻԶ։ Միլուա դիմեց Գալիֆէին հարցապնդումով այն միջոցների առիթով, որոնք ձեռք են առնված օֆիցէրների՝ և մանաւանդ Նիգրիէի դէմ։

ԲԷԼԳՐԱԴ։ Երէկվանից այստեղ նիստ ունեցող զինուորական դատարանը քննեց մի քանի գործեր թագաւորին վիրաւորանք հասցնելու վերաբերմամբ և ուրիշ գործեր, որոնք կապ չունեն Միլանի կեանքի դէմ փորձ անելու հետ։ Մեղադրվողներից երեքը դատապարտված են բանտարկութեան։ Մէկը, որ մեղադրվում էր թագաւորական ընտանիքի դէմ բրօշիւր տարածելու համար, արդարացրված է։ Միլանի կեանքի դէմ փորձ անելու գործի քննութիւնը դեռ ևս չէ սկսվել։

ԿՈՒՐՍԿ։ Սկսվեց հաճարի հունձը։ Հիւսիսային նահանգներում բերքը լաւ է, հարաւայիններում—միջակ է և տեղ-տեղ վատ։ Գարնանացանը լաւ է ամբողջ նահանգում։ Յուլիսի 4-ին և 5-ին կարկուտը ոչնչացրեց 2000 դէսիատինից տեղի մի քանի գաւառներում։

ԿԻԵՎ։ Եկաւ շարժական հրդեհաշիջային ցուցահանդէսը, որը 12 վագոններ է գրաւում։ Ցուցահանդէսը գնում է Նէժին վաղը, երեկոյեան։

Հարաւ-արևմտեան երկրի մեծ մասի մէջ ցորենի հունձը տեղի է ունենում անմպաստ պայմաններում։ Ամեն օր տեղում են հեղեղներ, անձրևներ։ Հացաբոյսը փտում է արմատից և խուրձերում։ Այդ տեղերից մեծ մասում վատ յատկութեան հաց է սպասվում։

16 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բարձրագոյն հրաման է հրատարակված՝ ժամանակաւոր արգելված կալուածքների վերաբերեալ կանոնադրութիւնը հաստատելու մասին։

ԼԻԶԷԿԻԼ (Շվէցիա)։ «Իւպիտէր» նաւը Բրիգայից այսօր, գիշերը, ընդհարվեց ափին, կորցնելով առագաստները։ 14 նաւաստիներից 11 հոգի փրկվեցին, 1 հոգի ծանր կերպով վիրաւորվեց։ Կապիտանը և երկու նաւաստիներ խեղդվեցին։ Նաւը կատարելապէս ջախջախվեց։

ԿԱՆ։ Մարդասպան Էրէ, օգուտ քաղելով այն բանից, որ նախագահը խօսում էր բարեկամների հետ, երկու անգամ բէվօլվէր արձակեց նրա վրա։ Նախագահը, սրտում վիրաւորված, իսկոյն մեռաւ։ Մահը մեծ սարսափ առաջացրեց։

ԽՈՒԱՆ։ Իզիդոր Խիմենէս բոլոր շանսեր ունի նախագահ ընտրվելու։

ՊԱՐԻԶ։ Կատարելապէս սուտ է Ժամօն և Էրվէ գեներալների հրաժարական տալու լուրը, որը տարածվեց այսօր և բօրսայում առաջացրեց բէնտայի բաւական մեծ անկումն։ Վալդէկ-Ռուսսօ հեռագրեց բօրսային ոստիկանութեան կոմիսարին, խնդրելով հերքել լուրը և քննութիւն սկսել յանցաւորներին գտնելու համար։

ԲԷԼԳՐԱԴ։ Միլանի ադիւտանտ Լուկիչ, որը վիրաւորվեց Միլանի դէմ սպանութեան փորձ անելու ժամանակ, դեռ ևս չէ առողջացել, թէպէտ և գնդակը գտնվեց իբր-ճառագայթների օգնութեամբ և հանվեց մարմնից։

ՑԷՏԻՆԻԷ։ Իշխանորդի Դանիլօ և պրինցուհի Իտտա ժամանեցին այստեղ կէսօրին։ Զինուորները կանգնած էին երկկարդ։ Ժողովուրդը ամբողջ ճանապարհի վրա ուրախութեան ցոյցեր էր անում նրանց։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

17 յուլիսի

Մուրհակների ընթացքը

Երեք	ամսով	Լօնդօնի վրա 10 ֆունտ	.	93,90
„	„	Բերլինի վրա 100 մարկ	.	45,80
„	„	Պարիզի վրա 100 ֆրանկ	.	37,25
Չէկը		Լօնդօնի վրա 10 ֆունտ	.	94,85
„		Բերլինի վրա 100 մարկ	.	46,30
„		Պարիզի վրա 100 ֆրանկ	.	37,57½
Բօրսային դիսկօնտ		. . .	.	6—7½
4% պետական բէնտա		. .	.	100⅛
4% ազն. կալ. բանկի գրաւ. թղթ.			.	98⅞
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի			.	98⅞
5% վիճակ. տոմս. առաջին ներքին փոխ.				290
5% „ „ երկրորդ „ „			.	251
5% „ գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի.				206⅜
5% ոսկու բենտա		. . .	.	
5% գրաւ. թղթ. փոխ. հող. վարկի ընկ.				181
4½% ներքին երկաթուղ. փոխ. 1890			.	100½
Նոյնը		 1892	.	100½
5% Թիֆլիսի վարկի ընկերը.		.	.	100
4½% Թիֆլիսի կալուած. բանկի		.	.	99¾
6% Բուխարայի կալուած. բանկի		.	.	102
5% „ „ „		.	.	99
Ակցիաներ Ռուս. առևտր.-արդիւն. ընկ.				270
„ Եղբ. Նոբելի նաւթ. ընկերը.			.	642
„ Կասպիական ընկ.		.	.	630
„ Բագուայ նաւթ. ընկ.		.	.	838

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

№ 1 գնացքը։		№ 3 գնացքը։	
Բաղուից դուրս է գալիս	ցեր. 4 ժ. 15 ր.	գիշ.	12 ժ. 20 ր.
Թիֆլիս է հասնում	առ. 8 ժ. 40 „	երբ.	6 „ 38 „
Թիֆլ. դուրս է գալիս	„ 9 „ 10 „	երբ.	7 „ 37 „
Բաթում է հասնում	երբ. 8 „ 32 „	առ.	8 „ 12 „
№ 2 գնացքը։		**№ 4 գնացքը։**	
Բաթումից դուրս է գալիս	առ. 9 ժ. 15 ր.	երբ.	9 ժ. 05 ր.
Թիֆլիս է հասնում	երբ. 8 ժ. 53 „	առ.	9 „ 45 „
Թիֆլիսից դուրս է գալիս	„ 9 „ 23 „	„	11 „ 32 „
Բաղու է հասնում	ցեր. 1 „ 04 „	„	6 „ 15 „

ԴԻԼԻ ԺԱՆՍՆԵՐ

Հէնգ հոգու համար

Թիֆլիսից դուրս է գալիս	7 ժ. առ.	9 ժամ. առ.	
Գիշերում է	Մլեհում	Պասանաուր	
Վլադիկավկազ հասնում է	7 ժ. 20 ր. երբ.	9 ժ. 20 ր. երբ.	
Վեց հոգու համար (չեն գիշերում)			
Թիֆլիսից դուրս է գալիս	1 ժ. ցերեկ.	7 ժ. երեկ	
Վլադիկավկազ հասնում է	3 „ 25 ր. երբ.	9 ժ. 50 ր. երբ	

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեսարդային հ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց հիւանդ.
Ա. Գ. ԿԱՐԱԳԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—1½—2 ժ. ներքին և միասեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ն. Ն. ՌՈՍՏՈՄԲԷԿՕՎ—6½—7½ ժ. վիրաբուժական հ։
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7½—8 ժ.
Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խիպ, արեան, կաթի և այլն։
Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Տ. ԱՌՎԱՆԻՏԱԿԻ—պարապում է տանը ծաղկահատութեամբ, բժշկական մարմնամարզութեամբ և մարզելով. դիմել 11—1 ժ.։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
7—150 Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԹԻՖԼ. ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Մամուլի տակ է

1) ԼԱՖՕՆԹԷՆԻ ԱՌԱԿՆԵՐԸ, թարգմ. Մ. Նուպարեանի. 2) ՀՈՍՀՈՍԻ ՑԻՇԱՏԵՏՐԸ, բ. տպ. Ե. Պարոնեանի. 3) ՄԱՆԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՏԱՆԵԿՈՒԹԻՒՆ, Տօլստոյի, թարգմ. Պ. Պ. 4) ՀՁՕՐ ՍԱՄՍՕՆ, Օժէշկոյի, թարգմ. Ա. Ահարոնեանի. 5) ԱՌՕՐԵԱՑ ՀՈՎՈՒԵՐԳՈՒԹԻՒՆ, Օժէշկոյի, թարգմ. Ա. Ահարոնեանի. 6) ՁՈՐՍ ՀԱՏ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ գրքեր։

Անդամ գրվողը ՍՏԱՆՈՒՄ է ՏԱՐԵԿԱՆ 8 ՌՈՒԲԼԻ ԳԻՐՔԵՐ, ընտրելով ընկերութեան հրատարակութիւններից և ՎՃԱՐՈՒՄ է ՏԱՐԵԿԱՆ 6 ՌՈՒԲԼԻ։

Դիմել՝ Тифлисъ, Тифлисское Общество Изданія Армянскихъ книгъ. կամ Tiflis, (Russie), Société de la publication des livres Arméniens.
1—5

ԲԺԻՇԿ Գ. Ս. ԳԷՐՑՖԷԼԴ

Մադերեան փողոց, № 5.

որ ամսնագէտ է կաչու, միզասեռական (էլեկտրականութեամբ), վեներական և սիֆիլիսի հիւանդութիւնների

ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

Ընդունում է հիւանդներին ամեն օր
Առաւօտեան 9—12 ժ.
Երեկոյեան 5— 8 ժ.
10—60

16—52 (չ.)

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի
ՔՐԻՍՏԱՓՈՐ ԹԱԴԷՈՍԵԱՆԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Հեղինակի պատկերով)

Բաժանորդագրումն է 15 կոպէկ, տպվելուց յետոյ թանգ կը լինի։ 3—5



Վաճառվում է ապրանքի և պարֆիւմ. խանութներում։ Գրամոֆոնի և բրիլիանտի դիպուածում։
(9 և 17) 11—14

Երևանի նահանգի Նոր-Բայազէդ գաւառի Բասարգէչար գիւղի եկեղեցին խարխուլ լինելու պատճառով, արդէն երեք տարի է փակվել է պաշտօնապէս։ Գիւղացիները, շրջապատված լինելով բազմաթիւ թիւրքաբնակ գիւղերով, իրանց աննախանձելի վիճակի պատճառով անկարող են նորոգել եկեղեցին, ուստի օգնութեան ձեռք են կառկառում, դիմելով ազգային բարերարներին ի սէր ազգութեան նիւթապէս նպաստել եկեղեցու կառուցմանն։

Նպաստը ուղարկվում է Երևանի առաջնորդին։ Քահանայք և ժողովուրդը
3—3

ՄԱՆԿԱԲԱՐԶՈՒՀԻ

Վ. Յ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

Միքայէլեան փողոց, տ. № 93. տէլէֆոն № 506։ (Հ.) 30—45

ԳԼԽԱՒՈՐ ԳՐԱՍԵՆԵԱԿ ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿ.

„Ր. Կեօղէր եւ ընկ. Մօսկվայում“

Գտնվում է Մօսկվայում, միջին առևտրական շարքերում

* Ընկերութեան ֆիրման հռչակ է ստացել՝ իբրև միշտ նախաձեռնող պակասեցնելու գները և կատարելագործելու նրա ապրանքների և ճիւղերի արդիւնքները։
* Ցայտնի է նոյնպէս, որ Ր. ԿԵՕԼԷՐ և ԸՆԿ. ֆիրմայի ապրանքները և արտադրութիւնները յատկութեան կողմից այնքան կատարելագործված են, որ աւելին անկարելի է սպասել։
* Ֆիրման հնարաւորութիւն է ստացել ապրանքների գները աստիճանաբար պակասեցնել և տեսակները կատարելագործել միայն այն պատճառով, որ նրա ապրանքները ծախվում են մեծ քանակութեամբ և տարածվում են ամբողջ Ռուսաստանում։
* Այդ պատճառով ընկերութիւնը իրաւունք ունի ցանկութիւն յայտնելու, որպէս զի սպառողները Ի ՆԿԱՏ ԱՌՆԵԼՈՎ ԻՐԱՆՑ ՇԱՀԵՐԸ, ասեն տեղ, ինչպէս Մօսկվայում, այնպէս և գաւառներում գտնվող վաճառականների մօտ ուղղակի պահանջէին և առաւելութիւն տային ֆիրմայի ապրանքներին, իսկ վաճառականներ ձեռք բերէին այդ ապրանքները, որի համար յուսով ենք՝ ԵՐԲԷՔ ՉԵՆ ԱՄԱՉԻ ԻՐԱՆՑԻՑ ԳՆՈՂՆԵՐԻ ԱՌԱՋ։

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՑԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 21 յուլիսի (2 օգոստոսի) ԱՆԱՏՕԼԻ շոգենաւը, նաւապետ ԲԻԱՆԿԻ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են առևորակցակաս գներով։

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արմօին, Նարէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիմոնի փող. Թօջափարուխովի և Մայտուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. և Ի. Մութաֆեանցներին, Նարեբեժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27։ ՆՈՎՈՐՕՍՍԻՑՍԿ—պ. Մելխիոր Հերշենսոնին։ (Ե. Հ. Շ.) 19—20

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԱՀԽԱԹՈՒՆԵԱՆՑԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

գրեց Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան

ԳԻՆԸ 1 ՌՈՒԲԼԻ

Ծախվում է՝ Թիֆլիս—Կենտրոնական, Շուշի—Բ. Տէր-Սահակեանի, Ալէքսանդրոպոլ—Մխիթարեանի, Կարս—Մկրտումեանցի գրավաճառանոցներում։
Կենտրոնական գրավաճառանոցում ծախվում է նոյն հեղինակի

„ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ“

(1—15) ԳԻՆԸ 1 ՌՈՒԲԼԻ 9—10

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՄՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն հաստիչի վրա, 5) Առևտրական Թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամեն այն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլոլակում, Ալէքսանդր Փրիդոնովի տանը № 9, Սերգիեվսկայա և Նագօրնայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս եղբ. Ծովհաննէսների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу. (Ս. Շ.) 9—25

Ֆինանսների մինիստրի թոյլտուութեամբ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Баку, Прачешная, домъ Теръ-Ованесова).

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական-առևտրական կրթութիւն և պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։ Կուրսերում աւանդվում են՝ 1) Առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն հաստիչի վրա. 2) Հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առևտրական և բանկային 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն, 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղումն ձեռագրի։)

ԳԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ ՍԿՍՎՈՒՄ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-ից։

Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում և Եղբ. Ծովհաննեան և ընկ. ԲԱԳՈՒԻ բաժանմունքում։ Օտարաքաղաքացի ունկնդիրների յարմարութեան համար կուրսերում ընդունվում են դիշերօթիկներ։ Կուրսերի կանոնագրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը—տրվում են և ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ БАКУ, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову,
(Ե. Շ.) 4—25



ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԻՒՆ
Ռուսաց և արտասահմանեան ֆիրմաների։

ԲԻՒՐՕՆ ՑԱՆՁՆԷ ԱՌՆՈՒՄ
կառուցանել
Ամեն տեսակ շինութիւններ, գործարաններ և գործատներ

ԳԱԶՕ-ՇՈԳԻԻ-ՋՐԱՆՑՔՆԵՐ
Ամեն տեսակ էլէկտրօտէխնիկական կառուցումներ և սարքեր, այսինքն հեռագիրների, տէլէֆոնների, լուսաւորութեան, տրամվայների և ոյժի հաղորդելը հեռաւորութեան վրա։

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԻՒՐՕ

Ինժեներ Ն. Բ. Պասաէկի

Тифлисъ, Михайловская ул. № 116,
Հասցէն հեռագիրների համար. Тифлисъ—Пассеку.
ՏԷԼԷՖՕՆ № 642.



ԿԱՆԱԼԻԶԱՑԻԱ, ՎԵՆՏԻԼԻԱՑԻԱ և ՏԱՔԱՑՈՒՄԸ

ԴՆԵԼ, ԺՈՂՈՎԵԼ և ՍԱՐՔԵԼ
ամեն տեսակ
իւրբիններ, խողովակներ, մեքենաներ և ջրհաններ։

ԿԱՌՈՒՑԱՆԵԼ
երկաթէ կամուրջներ
և տնակներ։

ՑԷՄԷՆՏԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ
(Ե. Հ. Շ.) 21—100

Дозволено цензурою, Тифлисъ, 16 Іюля 1899 г.
Типографія Грузинск. Т.—ва Орбеліановская ул., № 27.